В заключении книги подчеркивается, что все достижения армянского народа, как и всех народов Советского Союза, на пути построения коммунистического общества вытекают из самой сути советской социалистической системы.

Касаясь недостатков рецензируемой книги, отметим, что было бы желательно, чтобы автор более подробно и обстоятельно осветил деятельность профсоюзных и комсомольских организаций Армении в деле осуществления поставленных партией задач. В работе имеются повторения. Так, например, тезис о том, что основной задачей первой послевоенной пятилетки являлось прежде всего восстановление экономики Армении, а затем ее дальнейшее развитие, повторяется несколько раз (стр. 6, 41 и др.). По нашему мнению, неверно излагать развитие народного хозяйства в плановых наметках, в то время как результаты намеченных планом задач стали действительностью. Этот недостаток присущ многим главам. Имеются в книге и стилистические погрешности.

В целом же монография С. В. Харманданяна, посвященная героическому труду армянского народа в годы четвертой пятилетки, является интересным и нужным исследованием.

В. А. ДАРЬЯН

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԸ*

Անցած քառասուն տարիների ընթացքում Սովետական Հայաստանը դարձել է բարձր զարգացած սոցիալիստական ռեսպուբլիկա։ Ռեսպուբլիկայի տնտեսության և կուլտուրայի զարգացման գործում մեծ դեր են խաղացել սովետական ֆինանսները, որոնց նվիրված է պրոֆ. Ղ. Լ. Շարբյանի գրախոսվող աշխատությունը։

Աշխատության մեջ հեղինակը հարուստ թվական տվյալներով ցույց է տալիս Սովետական Հայաստանի ֆինանսների զարգացումը ըստ ժողովրդական տնտեսության առանձին էտապների. Կոմունիստական պարտիայի տնտեսական բաղաքականության լույսի տակ։ Աշխատությունը ընդգրկում է սովետական ֆինանսական սիստեմի բոլոր օղակները, որոնք ընթերցողին հնարավորություն է տալիս լրիվ և բազմակողմանի պատկերացում կազմելու ուսումնասիրվող հարցերի մասին։

Սովետական ֆինանսական սիստեմում կենտրոնական տեղ է գրավում պետական բյուջեն։ Հեղինակը մանրամասն վերլուծության է ենթարկում ռեսպուբլիկայի պետական բյուջեի եկամուտները և ծախսերը։ Վերլուծությունից երևում է, որ պետական բյուջեի միջոցները ամբողջովին օգտագործվում են ժողովրդական տնտեսության զարգացման և աշխատավորների պահանջմունքների բավարարման համար։ Տարիների ընթացքում պետական բյուջեի եկամուտների մեջ աճում է սոցիալիստական ձեռնարկությունների վճարումների տեսակարար կշիռը և իջնում բնակչության վճարումների տեսակարար կշիռը։ Երկրի տնտեսական կյանքում տեղի ունեցած փոփոխությունների հետ միասին դա հիմք է ծառայում բնակչությունից գանձվող հարկերի վերացման համար։ «Այդ պայմաններում,— մատնանշեց ընկեր Ն. Ս. Խրուշչովը ՍՄԿՊ XXI համագումարում,—բնակչությունից գանձվող հարկերի գոյությունը անհրաժեշտությունից չի բխում՝ ոչ դրանց դասակարգային նշանակության տեսակետից, ինչպես դա տեղի ուներ անցյալում կապիտալիստական տարրերի եկամուտները սահմանափակելու իմաստով, ոչ էլ ՍՍՌՄ պետական բյուջեի եկամուտները ապահովելու տեսակետից։ Այս ամենը մեզ հնարավորություն է ընձեռնում մոտակա տարիներս հրաժարվել բնակչությունից հարկեր գանձելուց»[1]։ ՍՍՌՄ Գերագույն Սովետի հինգերորդ սեսիան որոշում ընդունեց բանվորներից և ծառայողներից գանձվող հարկերի վերացման մասին։

Սովետական բյուջեի եկամտային բաղադրի զարգացման համար կարևոր նշանակություն ունեցավ 1930 թ. հարկային ռեֆորմը, որի ընթացքում հանդես եկավ շրջանառության հարկը։ Հե-

---

* Ղ. Ն. Շարբյան, ֆինանսները և սոցիալիստական շինարարությունը ՀՍՍՌ-ում 40 տարում։ Պետհրատարակչություն, 1960։

[1] Ն. Ս. Խրուշչով, ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1959—1965 թվականների կոնտրոլ թվերի մասին, էջ 60։

ղինակը մանրամասնորեն պարզաբանում է հարկային ռեֆորմի անհրաժեշտությունը և այն պայմանները, որոնք հնարավորություն տվեցին իրականացնել այդ ռեֆորմը, որն ունեցավ կարևոր ժողովրդատնտեսական նշանակություն։ Աշխատության 29-րդ էջում նշվում է, որ նախապատերազմյան 13 տարիների ընթացքում շրջանառության հարկի մուտքերը կազմել են 166,3 միլիոն ռուբլի։ Այդ նշանակում է, որ պրոֆ. Ղ. Շաքարյանը շրջանառության հարկի գումարի մեջ է մտցրել նաև մինչև հարկային ռեֆորմը գործող անուղղակի հարկերից ստացված եկամուտները։ Հարցին այդպես մոտենալու դեպքում կամա թե ակամա ստացվում է այնպես, որ իբր թե շրջանառության հարկը իր մեջ ընդգրկում է անուղղակի հարկի տարրեր, որը ճիշտ չէ։ Շրջանառության հարկը ամբողջությամբ վերցրած հանդիսանում է ժողովրդական տնտեսության մեջ ստեղծված հավելյալ արդյունքի մի մասը և ոչ մի ընդհանուր բան չունի անուղղակի հարկերի հետ։

Աշխատության մեջ շատ տվյալներ են բերված շրջանառության հարկի դինամիկայի և նրա տեսակարար կշռի մասին պետական բյուջեի եկամուտներում։ Հիմնավորված ձևով վերլուծության են ենթարկվում դրանց փոփոխությունները պայմանավորող գործոնները։ Սակայն այդ գործոնները ընդգրկված են ոչ լրիվ չափով։ Հայտնի է, որ շրջանառության հարկը կազմում է արդյունաբերական և պարենային ապրանքների գների մի մասը։ Մյուս հավասար պայմաններում որքան ցածր է ձեռնարկության մեծածախ դինը և բարձր մանրածախ դինը, այնքան մեծ է շրջանառության հարկի դրույքը և ընդհակառակը։ Այդ պատճառով շրջանառության հարկի մուտքերը պայմանավորված են ոչ միայն թողարկվող և իրացվող ապրանքների ծավալով, այլ նաև շրջանառության հարկի դրույքների մեծությամբ։ 1947—1954 թթ. կատարվեց ժողովրդական սպառման առարկաների գների յոթ խոշոր իջեցում։ Այդ իրականացվեց ոչ միայն արտադրանքի ինքնարժեքի իջեցման հաշվին, այլ նաև շրջանառության հարկի հաշվին, որը անխուսափելիորեն հանգեցրեց շրջանառության հարկի մուտքերի կրճատման։ Բավական է ասել, որ 1953 թ. մանրածախ գների իջեցման հետևանքով ՍՍՌՄ պետական բյուջեն կորցրեց 4,6 միլիարդ ռուբլու շրջանառության հարկ։ Չնայած դրան, հեղինակը աշխատության 49-րդ էջում խոսելով ժողովրդական սպառման առարկաների մանրածախ գների իջեցման մասին, հետագայում ցույց չի տալիս այն ազդեցությունը, որը ունեցել է գների իջեցումը շրջանառության հարկի մուտքերի գումարի վրա։ Հայկական ՍՍՌ-ում 1950 թ. գների իջեցման հետևանքով միայն մսի, երշիկեղենի և պանրի գծով պետական բյուջեն կորցրեց 3,3 միլիոն ռուբլու շրջանառության հարկ։

Սովետական ֆինանսները և առաջին հերթին պետական բյուջեն առաջնակարգ դեր են խաղում երկրի ազգային եկամտի բաշխման և վերաբաշխման գործում։ Պետական բյուջեի միջոցով Սովետական պետությունը ազգային եկամտի մի զգալի մասը օգտագործում է հասարակական սպառման ֆոնդեր ստեղծելու համար։ Կոմունիստական հասարակության ծավալուն կառուցման ժամանակաշրջանում գնալով էլ ավելի է աճում հասարակական ֆոնդերի դերը աշխատավորների պահանջմունքների բավարարման գործում։ Գրախոսվող աշխատության մեջ հարուստ փաստական տվյալներ են բերված սոցիալ-կուլտուրական միջոցառումների ֆինանսավորման մասին։ Բերված տվյալները ցույց են տալիս, որ սոցիալ-կուլտուրական միջոցառումների ծախսերը տարեցտարի արագ տեմպերով աճում են։ Հեղինակը պետք է ընդհանրացներ այդ փաստերը և աներ այն կարևոր եզրակացությունը, որ դնալով էլ ավելի պետք է մեծանա հասարակական սպառման ֆոնդերի դերը աշխատավորների պահանջմունքների բավարարման գործում։ Այդ բխում է սոցիալիստական տնտեսության զարգացման օրինաչափություններից։ Միայն հասարակական սպառման ֆոնդերի անշեղ աճի պայմաններում հնարավոր է աստիճանաբար ըստ աշխատանքի բաշխումից անցնել ըստ պահանջմունքների բաշխման կոմունիստական սկզբունքին։

Հայտնի է, որ մինչև վերջին տարիները սովետական ռեսպուբլիկաների տերիտորիաներում միաժամանակ զգալի ծախսեր էին կատարվում միութենական բյուջեից։ Արդյունաբերության և շինարարության կառավարման վերակառուցման և միութենական ռեսպուբլիկաների իրավունքների ընդլայնման կապակցությամբ այդ ծախսերը այժմ համարյա ամբողջովին կատարվում են ռեսպուբլիկական բյուջեներից։ Այդ կապակցությամբ հեղինակը բավական մեծ աշխատանք է կատարել Հայկական ՍՍՌ վերջին տարիների պետական բյուջեները անցած ժամանակաշրջանի բյուջեների հետ համեմատելի դարձնելու ուղղությամբ։ Այդ նպատակով մի շարք տարիների համար վերլուծության են ենթարկված Հայկական ՍՍՌ-ում միութենական բյուջեից կատարված ծախսերը, որը կարևոր նշանակություն ունի ոչ միայն տվյալ հետազոտության, այլ նաև հետագա հետազոտությունների համար։

Ռեսպուբլիկայի պետական բյուջեի բաղկացուցիչ մասն են կազմում տեղական բյուջեները։ Հեղինակը հարուստ փաստեր է բերում տեղական բյուջեների զարգացման մասին։ Սակայն այդ

տվյալները բերված են ընդհանուր գումարով և ըստ տեղական բյուջեների առանձին տեսակների։ Աշխատության 104-րդ էջում տվյալներ են բերված նաև Երևան քաղաքի բյուջեի զարգացման մասին 1955—1960 թթ. ընթացքում։ Աշխատությունը շահած կլիներ եթե թեկուզ մի քանի տարվա տվյալներ բերվեին ռեսպուբլիկայի մյուս քաղաքների և շրջանների բյուջեների մասին, որը ընթերցողին հնարավորություն կտար կոնկրետ պատկերացում կազմել այդ բյուջեների զարգացման մասին։

ՍՍՌՄ ֆինանսների կարևոր օղակներից մեկը վարկային սիստեմն է։ Ժողովրդական տնտեսության վարկավորման ձևերի զարգացման համար առանձնապես մեծ նշանակություն ունեցավ 1930 թ. վարկային ռեֆորմը։ Խոսելով այդ մասին պրոֆ. Ղ. Շաքարյանը բավարարվում է գրելով. «Վերևում շարադրված շարժառիթներով, 1930 թվականին անցկացվեց նաև վարկային ռեֆորմ, որը վերացրեց նոր տնտեսական քաղաքականության առաջին տարիներին մտցված առևտրական վարկի սիստեմը, այն փոխարինելով ուղղակի բանկային վարկավորմամբ։ Դրա հետ միասին վարկային ռեֆորմը հնարավորություն տվեց Պետբանկում կենտրոնացնելու կարճատև վարկավորման ամբողջ գործը և ուժեղացրեց Պետբանկի, որպես հաշվարկային կենտրոնի դերը» (էջ 23—24)։ Այդ բոլորը միանգամայն ճիշտ է։ Սակայն ոչ մի կերպ չի կարելի բավարարվել այդքանով, 1930 թ. վարկային ռեֆորմը սովետական վարկային սիստեմի զարգացման մեջ համարյա մի ամբողջ պատմական ժամանակաշրջան է և հեղինակը նրա վրա պետք է մեծ ուշադրություն դարձներ։ Թեկուզ ընդհանուր գծերով ցույց տար այն խեղաթյուրումները, որոնք թույլ էին տրվել 1930 թ. վարկային ռեֆորմի անցկացման ժամանակ, ընթերցողին ծանոթացներ պարտիայի և կառավարության կողմից խեղաթյուրումների վերացման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների հետ և այլն։ Վարկային ռեֆորմի ժամանակ ժողովրդական տնտեսության ֆինանսավորումը և երկարատև վարկավորումը ամբողջովին կենտրոնացվեց կազմակերպված մասնագիտական բանկերում (Արդյունաբերական բանկ, Գյուղատնտեսական բանկ և այլն)։ Հեղինակը անպայման պետք է կանգ առներ այդ բանկերի կազմակերպման, նրանց խնդիրների և ֆունկցիաների վրա, մանավանդ, որ նշված հարցերի մասին մեր մայրենի լեզվով ոչինչ չկա գրված։ Միաժամանակ պետք է նշել, որ աշխատության ոչ բոլոր բաժիններում են տվյալներ բերված ժողովրդական տնտեսության վարկավորման մասին։ Աշխատության վերջին մասում (էջ 111) արդեն հեղինակը կանգ է առնում 1959 թ. անցկացված մասնագիտական բանկերի վերակառուցման և ՍՍՌՄ Շինարարական բանկի կազմակերպման հարցերի վրա։

Գրախոսվող աշխատության մեջ բավական տեղ է հատկացված սովետական ֆինանսական սիստեմի մյուս օղակների՝ խնայողական դրամարկղների, պետական վարկի և պետական ապահովագրության զարգացման հարցերին։ Բերված փաստական տվյալները բնորոշում են ֆինանսների այդ օղակի արագ տեմպերով զարգանալը։ Պետական վարկի, խնայդրամարկղային գործի և պետական ապահովագրության զարգացման համար կարևոր նշանակություն ունեցավ նաև դրանց սիստեմում կատարված կազմակերպական ձևերի հետագա կատարելագործումը։ Աշխատության մեջ այդ հարցը համարյա աչքաթող է արված։ Միայն վերջին գլխում համառոտակիորեն խոսվում է դրանց մասին։

Նշված թերությունները ամենևին էլ չեն նսեմացնում պրոֆ. Ղ. Շաքարյանի «Ֆինանսները և սոցիալիստական շինարարությունը ՀՍՍՌ-ում 40 տարում» աշխատությունը։ Այս աշխատությունը անկասկած արժեքի է ռեսպուբլիկայի տնտեսագետների և ինտելիգենցիայի այլ խավերի ուշադրությանը։

Վ. Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ